

էջերուն կը ծանուցանէ վառամշակոյցայ երթն, յԱտորիս և զհանդիպումն Ս. Մեսրոպբայ, գանիէլեան նշանագրոց գիւտը, նորա ուսուցանեմն և անյախող ելբը. ՀԴ գլխում՝ ուր կը պատմէ վրաց և Աղուանից նշանագրոց գիւտը, ճիշդ կը համաձայնի կորեան 15 էջի աւանդա-ծին, յերկուսին միանգամայն կը յիշուի Ս. Մեսրոպբայ երթն յաշխարհն Սիւնեաց, և նոցա իշխանին վասակայ ձեռնտուութիւնը, զոր չէ մտրթ գտնել համառօտին մէջ: Կ գլխուն մէջ համաձայն 19 և 20 իջիցն կորեան կը պատմէ զկրկին առաքելութիւն Ս. Մեսրոպբայ յաշխարհս Հայոց, վրաց և Աղուանից. մի վասն վարդապետութեան նշանագրոց, միւս ևս՝ վասն քարոզութեան Աւետարանին. ուր կը յիշուին Գարդմանաց իշխանն խոշրս, թագաւորն վրաց Արմինդ և իշխանն Տաշրաց Աշուրայ: Իսկ համառօտին մէջ ընդ հակառակն մի միայն առաքելութիւն կը յիշուի: ՀԸ գլխուն մէջ կը պատմէ Մովսէս վառամշակոյցայ որդւոյն Արտաշրի կամ Արտաշէսի թագաւորելն, որ համաձայն է կորեան 18 իջին, ուր կ'ըսուի թէ Մեսրոպբայ յետ երկրորդ առաքելութեան և զալտեան 'ի վաղարշապատ՝ հանդիպեցաւ կաթողիկոսին Սահակայ և թագաւորին Հայոց Արտաշիսի: Եւ իրօք այս ժամանակս վախճանած էր վառամշակոյց: ԿԳ գլխում կը յիշէ Ս. Սահակայ թաղման հանդիսին մէջ զտիկիւնն Մամիկոնէից Դատրիկ, որ էր կին վարդանայ ստրատելատի. սոյնը կը գտնեմք կորեան յէջ 25: Այսպէս նաև ԿՍ գլուխն՝ յորում կը պատմուին համաձայն կորեան, սերմնացան Նեստորականաց գալուստն 'ի Հայս և նոցա պատուհասակոծ արտաքսումն 'ի ձեռն Ս. Սահակայ:

Շարունակելի

Լ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ

ԵՋՆԻԿ ԵՒ ԻԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ



Սեբ ոսկեգարեան ինքնագիր մատենագրաց մէջ չկայ մէկն որ այնքան փոփոխութիւն կրած ըլլայ (գոնեաւ ըստ այլայլութեան կարգին), ինչպէս մեր ոսկեխօսակն Եզնիկ: Վասնզի ինչպէս կարելի պիտի ըլլայ մեկնել այն ամէն ետևառայութիւնը և ընդհատմունք իմաստից՝ որք յաճախ կը պատահին ընթերցողին աչաց, եթէ չընենք այսպիսի օրինաւոր ենթադրութիւն մի (ենթադրութիւն՝ զոր ստիպեալ ենք ընել գրեթէ մեր բոլոր ձեռագրաց նկատմամբ), թէ օտարաց ձեռք կամ օրինակորք խանգարած ըլլան այն հոյակապ շէնքը, որոյ երկու գեղեցիկ ձիւղբերն էին՝ ճոխութիւն իմաստից և հմտութեանց, որ յետ այնքան այլայլութեանց ցարդ

իսկ անաղօս կը փայլէ 'ի նմա, և պայծառ կարգ մը՝ որ գրեթէ նը-
ւազեր է: — Ի հաստատութիւն խօսիցս՝ դնենք հոս մի քանի դիտո-
ղութիւնք, մնացածը ընթերցողաց թողով խորհրդածել:

Նախ, առաջին գրոց սկիզբը՝ եթէ գիտեալու լինէիք, պիտի տես-
նենք որ յետ գեղեցիկ յառաջաբանին, յորում վարդապետաբար Աստու-
ծոյ էութեան անքննելի լինելը կ'ապացուցանէ, խիստ բնական օրի-
նակ մը մէջ կը բերէ Աստուծոյ անպակաս իմաստութեան (էջ 8).
« Եթէ աղբիւրք մշտաբուրդիք հանապազ բղխեն և ոչ պակասն, ևն »
որ թուի թէ ներշնչութիւն մի է՝ եթէ ոչ և քաղուած ինչ ուրիշէ մը՝ Ս.
Բարսղի այն խօսքերուն 'ի ճառս վեցօրէից, ուր գետոց վրայ խօսելով
կ'ըսէ (յէջ 55 և 70). « Ձի անտի ակունք մշտաբուրդիք բղխեսցեն,
որ յորեալ ելանն անդադար և ոչ պակասն, ևն ». և կամ (էջ 77).
« Որ ճեպեալ ստիպիցէ զյորդարուղիս բղխումն աղբիւրցն... որ հանա-
պազ բղխեն և ոչ սպառին, և 'ի յաճախել զյորդութիւնսն՝ ոչ պա-
կասն, ևն ». Աստ պիտի նկատէ ընթերցողն, որ գրեթէ նոյն խօսքերը
և իմաստքը գարձեալ կը կրկնուին՝ ինչ որ առաջ ըսուած է, սրով և
տւելի ևս կը ճապողի ոճն և գրութիւնն: — Երկրորդ ճառին կամ
գլխոյն մէջ (9 — 11 էջ) կը ցուցնէ եզնիկ թէ յարարածոց որ է չար
և սր բարի, և ահա յանկարծ կը փոխէ իւր բանից կարգը. վասն զի
յետ ըսելու, թէ « Ապա ուրեմն է ինչ զօրութիւն ծածուկ, որ զապա-
կանիչն միմեանց խառնուածովք արար օգտակարս իրերաց », որ
բնական հետևութիւն մի է առաջին խօսքերուն, անմիջապէս կը յաւե-
լու, « Եւ որ առով միտս ունին, ոչ զչարժունսն՝ այլ զչարժիչն պար-
տին փառաւորել », ևն. և ապա մինչև յէջ 17 կը խօսի տիեզերական
չարժմանց և ուրիշ տարերաց վրայ, զորս կը պաշտէին հեթանոսք:

Ահա ակներև կը տեսնէ ամենայն ոք, որ այս կրկին իմաստքս բնաւ
չ'են կապուի իրերաց հետ. վասնզի, նախ՝ չարի և բարւոյ խնդրոյն
վրայ կը խօսէր, և ապա յանկարծ բազմաստուածութեան և հեթա-
նոսաց պաշտամանց մրայ. մինչդեռ շատ աւելի պատշաճ կը թուի՝
ըստ բնական կարգին՝ տանել այս երկրորդ մասը 'ի վերջս երկրորդ
գրոց կամ 'ի սկիզբն երրորդին, ուր ընդարձակ և սճով կը խօսի լու-
սաւորաց շարժմանց և երկնային տարերաց վրայ: — Դարձեալ (յէջ
18 — 30) կ'առնու իւր առաջին խօսից կապը և կը ճառէ անդրէն
միևնոյն խնդրոյն վրայ. սակայն երկրորդ անգամ մի ևս ընդհատելով
իւր բանից ընթացքը, նոր խնդիր մ'ևս կը յարուցանէ, այն է հիւղեայ
խնդիրն. յորում թուի՝ թէ մերս եզնիկ մեղմով իմն կ'երթայ զկնի
հետոցն Ս. Բարսղի (վեց. Բ. ճառ, 25 — 28 էջ) մինչև իսկ նիւթա-
կան օրինակաց մէջ: Ի 25 էջն կը խոստանայ ցուցնել շարեաց
պատճառը. « Արդ հարկ է 'ի պատճառս շարեացն գալ և ցուցանել
թէ ուստի լինին շարիքն ». և իսկոյն նոյն էջին մէջ դարձեալ հիւղեայ
խնդրոյն կ'անցնի: — Աստ գեղեցիկ ճարտասանութեամբ և բանա-

կան փաստիւք կը հերքէ նոցա կարծիքը, որք երկուուրիւն (Dualism) կը վարդապետէին, որոյ գլխաւոր պաշտպանն էր Արիստոտէլ. և դարձեալ որք կ'ըսէին թէ Աստուած ընկերակալ կամ Առաջին Անշարժ (materia prima) ստեղծեց զայնպարհս, և միայն կերպարանք մը տուաւ անոր, ինչպէս կը վարդապետէ Պլատոն իւր Տիմէոս գրոց մէջ:

Եթեմերորդ գլխոյն մէջ կրկին հարցեր կը դնէ չարեաց նկատմամբ. նախ, թէ ք Չարիքս որ լինին՝ ուստի իցեն», որոյ պատճառը կը բացատրէ նոյն գլխոյն մէջ (27 — 32). Իսկ երկրորդ հարցման գալով, «Չարիքն որ լինին անձինք ինչ իցեն թէ արգասիք անձանց», իսկոյն կը յարէ. «Ասն, ՚ի դէպ է կարծել թէ արգասիք անձանց». և միայն այսու բանիւք շատանալով, կը ձգէ խօսից կապը՝ մինչև որ յէջն 34 յառաջ կը տանի և կը ցուցնէ թէ չարիքն անձնաւորք չեն: Այլ հարկ է դիտել աստ, զի ութերորդ ճառն կամ գլուխն (32 — 34 էջ) բոլորովին միջանկեալ հաստուած մի է՝ ընդ մէջ հարցման և նորա պատասխանոյն, եթէ կարելի լինի այսպէս ըսել, ուր դարձեալ հիւղեայ վրայ կը խօսի գրեթէ մի և նոյն իմաստիւք և բացատրութեամբ՝ ինչ որ յառաջն ըսեր է, զոր մարթ է կրկնաբանութիւն կոչել: Շատ հաւանակաւն թուի, թէ այն հատուածիկն՝ բոլորովին յօրինակողաց ներմուծեալ լինի և կամ անդր փոխադրեալ ուրիշ տեղէ մի. ինչպէս նաև այն կտորն՝ զոր կը գտնեմք ՚ի վերջ կոյս Երրորդ գրոց (էջ 235) միևնոյն խնդրոյն նկատմամբ. վասնզի բնաւ ոչ բնական և ոչ տրամաբանական կապ մ'ունին իրենց նախորդ և վերջին խնդրոց հետ: Իսկ այն մասն (34 էջ), «Եւարդ զհիւղեայն խնդիր թողեալ... ՚ի չարեացն խնդիր եկեացուք», նոյնպէս դարձեալ օրինակողի ուրուք արդիւնք է, իբրև նրբին քող մի՝ պատրուակելու մտք իւր յանդգնութիւնը և կամ զօր մը երկու իմաստքը միացնելու մտք յաւելեալ:

Յետ ցուցանելոյ ապա օրինակօք և հաստատելոյ՝ թէ չարիքն ՚ի կամաց ծնանին, և ոչ են բնութեամբ, յանդգատս կ'ընդհատի խօսքին կարգը (39 էջ). և ապա մինչև ՚ի 59 էջ՝ այլևայլ խնդրոց վրայ կը ճառէ. զոր օրինակ, մարդոյս անձնիշխան կամաց ազատութեան վրայ, զոր արդէն երկրորդ գրոց մէջ ընդարձակ և վարդապետօրէն առիթ պիտի ունենայ ճառելու. սատանային վրայ՝ թէ ինչպէս փորձեց զԱդամ, սատանային բնութեան և անուան, նորա անձնիշխան կամաց և չարութեան վրայ: Իսկ յէջն 59 դարձեալ կ'առնու 39 էջին մէջ ձգած խօսքին կապը՝ բռնելով «Յետ այս ամենայնի հաւանութեանց՝ յամառեալ զնոյն ՚ի մէջ բերեն. բնութեամբ են, ասն, չարիք և ոչ կամածինք», ևն: Սակայն դարձեալ 32 էջէն մինչև ՚ի 111 էջն այլևայլ խնդիրներ կը յուզէ դիւահարութեանց, կախարդութեանց, և ուրիշ առասպելական կարծեաց կամ վիպաց վրայ, բացատրելով ըստ

կարի անոնց պատճառքը. և ապա վերջարանով մի և նախարանու-
թեամբ երկրորդ գրոցն՝ կը կնքէ առաջին գիրքը՝

Երկրորդ գրոց այն մասն՝ ուր բովանդակ Պարսից քէշին դէմ կը խօ-
սի, ամենէն աւելի ընտիր՝ իմաստասիրական կորովով լի և հարազատ
մասն է. զոր կարելի է ամբողջութիւն մի նկատել՝ բաց ՚ի վերջին էջերէն
(146—149), որ սակաւ մի կցկտուր կ'երևին, և ուր առանց վերջնական
եզրակացութեան կը ձգէ եզնիկ իւր խօսքը: Յետ որոյ (յէջս 149—185)
կը սկսի դարձեալ այլևայլ մտլար կարծիքներ մէջ բերել և հերքել զա-
նոնք՝ նման յառաջին գիրս գտնուած խնդրոց, որ յիրաւի անոնց շարու-
նակութիւն կամ մաս մի են: Դարձեալ այն կտորն՝ ուր կը խօսի
բախտից, ծննդոց և բաշխից վերայ՝ (155—163 էջ), գրեթէ հետևե-
ղութիւն մ'է Ս. Բարսղի վեցօրէից՝ եթէ ոչ բառից՝ գոնեա իմաստից
և օրինակաց (117—123): Իսկ յէջն 185 կը սկսի Գ գիրքն, որ ըստ
տպագրին վերջին մասն է Բ գրոց. ուր կը խօսի Յունաց իմաստնոց
դէմ, որք բնաւ չընդունելով մի Աստուածութիւն և Նախախնամու-
թիւն, կ'աստուածացնէին բնութիւնը, տիեզերքը և երկնից լուսաւոր-
ները. այս Գ գիրքս կ'արժէ առանձին նկատողութեան առնուլ:

Շարունակելի

Լ. Յ. Ք.

ՅՈՐԸՐԳԱՅՈՒԹԻՒՆԸ

ՍԱԼՄՈՍԱՅ ԳՐՈՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ

Գուրիթ մարգարէին Սաղմոսաց գիրքը, երեք հազար տարիներու
միջոց, բիւրուաւոր և միլիոնաւոր օրինակներ, նախ ձեռագիր՝ և ապա
տպուած, տարածուած է միլիոնաւոր ժողովրդոց ձեռք. գրեթէ ա-
մենայն ժամօթ լեզուներով թարգմանուած է. ինչպէս հին՝ հրէական
եկեղեցեոյ մէջ, նոյնպէս ևս քրիստոնեայ կեկեղեցեաց մէջ, չեն կատա-
րուիլ ոչ մի պաշտամունք առանց Սաղմոսաց. ժամերգութեան մէջ,
Ս. Պատարագի միջոց, մկրտութեան, պսակի, նոյն և մեռելաթաղի ա-
տեն, մերթ չէն և զուարթ, երբեմն տրտում և տխուր եղանակաւ կը
լսուի Ս. Մարգարէին ձայնը: Չգիտեմ կայ արդեօք աշխարհիս վերայ,
դպրութեան տեղեակ մէկը, որ չզիտնայ Մ սաղմոսը, և իւր ծածուկ
մեղաց համար, ծածկագիտին առաջ չզղչայ իւր մեղքերը: Սրբազան
հայրապետներ, ճգնազգեաց արեղայններ, զոջացեալ մեղաւորներ, հա-

1. Յեթներորդ դարու, Տե՛ Չափաբան Անանիա Շիրակացին՝ իւր առջև ունենալով գեր-
կուս ևս, զԲարսղի և զԵզնիկ, անոնց բազմատուրթեամբ՝ աւելի ընդարձակել և կշիւր է այն
խնդրքը իւր դրոց մէջ «Յաւառ երեսնէն սրբոց»: